ԳԱԳԻԿ ԽԱՉԻԿՅԱՆ

ՀԵՐՈՍԱԿԱՆԸ ԵՎ ՈՂԲԵՐԳԱԿԱՆԸ ԱՎԵՏԻՍ ԱՀԱՐՈՆՅԱՆԻ «ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ» ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ՄԻ ՔԱՆԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Ավետիս Ահարոնյանի/1866-1948/ «Ազատության ճանապարհին»/1906/ ժողովածուի մեջ զետեղված ստեղծագործությունների մեծ մասն հղացվել և գրականացվել են վավերական նյութի և գրողի գաղափարական-գեղագիտական ուրույն մոտեցումների ոլորտներում: Արձակագրի հոգեկերտվածքի, կենսափիլիսոփայության և 19-րդ դ. վերջի ու 20-րդ դ. սկզբի՝ արևմտահայության կացության ու ճակատագրի թելադրանքով՝ նրա գեղագիտական աշխարհայեցության մեջ գերակայում են հատկապես հերոսականի և ողբերգականի սկզբունքները: Գեղագիտության հիշյալ եզրերի տիրույթներում ընդգրկված երևույթները հոգեհարազատ են նեռռոմանտիկ Ահարոնյանի գեղարվեստական մտածողությանն՝ ընդհանրապես ու ժողովածուի կերպարներից շատերին՝ մասնավորապես: Մեզ համար ընդունելի է այն պատկերացումը, ըստ որի՝ գեղագիտական մյուս հասկացությունների պես «մարդկային գիտակցության և կեցության այս ֆենոմենները կարելի է անվանել նաև աշխարհայացքային /կամ աշխարհայեցության տեսանկյունից նշանակալի/ զգացմունքներ, որոնք գոյություն ունեն արվեստում որպես հեղինակի, կամ կերպարների /պատկերված դեմքերի/ «սեփականություն»: Նման զգացմունքները միահյուսված են կենսական որոշակի տեսակի երևույթների և մարդկանց ու նրանց խմբերի արժեքային կողմնորոշումների հետ: Սրանք առաջանում են այդ կողմնորոշումներից և մարմնավորում դրանք»[1]:

1890-900-ական թթ. հայդուկային ազատագրական կռիվներն իրենց բուն թատերաբեմում՝ Արևմտահայաստանի գավառներում, պատկերելիս Ահարոնյանն իրողությունները և նրանց գեղագիտական, աշխարհայացքային արժեք ունեցող զգացմունքային գնահատականը տալիս իր ուշադրությունը բևեռել է հիմնականում այս երկու եզրերով սահմանված երևույթների շփման ու միահյուսման վրա:

Օսմանյան կայսրության հայահալած քաղաքականության դեմ անհավասար պայքարում հայդուկները ծեռք էին բերում բարոյական ու հոգեբանական բացառիկ հատկանիշներ՝ անհատական ու խմբային հերոսությունը զուգակցելով աներևակայելի, տիտանական թվացող կամային ուժի, համառության ու տոկունության հետ: Նրանց պայքարը գիրկընդխառն էր ընթանում իմաստավորված, խիզախ ու անձնազոհ արարքների տիրույթներում: Հիշյալ տարիներին, առանձին դեպքերում տղամարդկանցից շատերին արժանի պահվածքով են

հանդես եկել նաև արևմտահայ կինն ու պատանին: Վերջիններիս մեջ հայ մարդու պատվախնդիր,ազատասեր ու համարձակ ոգին,թուրք ու քուրդ ջարդարարների դեմ նրանց ցուցադրած դիմադրությունն ու ընդվզումը յուրօրինակ դրսևորումներով է Ա.Ահարոնյանը պատկերել ժողովածուի «Զավոն»/1899/, «Վազրիկ» /1904/ և «Հազրեն» /1905/ պատմվածքներում:

«Զավոն» պատմվածքում արևմտահայ իրականության համար սովորական թվացող ֆաբուլան ու ավանդական գրական հորինվածքը նպատակասլացորեն են հակադրված բովանդակության փիլիսոփայական ենթիմաստին:Այստեղ անտիկ դիցաբանությունից դեռևս ծանոթ ներդաշնակ, անձնավորված կոսմոսի մասին պատկերացմանը հակադրվում է մարդկային հասարակության ստեղծած քաոսը, որն այս դեպքում առաջացել էր թուրք իշխողների նախաձեռնությամբ: Վանա լճի խաղաղ բնանկարով են շրջանակված պատմվածքի դրամատիկ, ողբերգական ու հերոսական դրվագները: Ափամերձ գյուղը մտած տաճիկ հարկահաններից խույս տալու նպատակով գեղջկուհի Զավոն և նրա հարսը՝ Հեղինարը, գիշերվա մթության մեջ, նավակով փախուստի են դիմում: Նրանց, դժբախտաբար, չի հաջողվում ազատվել հարկահավաքներին ուղեկցող թուրք զինվորների հետապնդումից: Չցանկանալով թույլ տալ, որ իր հարսը դառնա անօրենների զգայական հաճույքի առարկան, Զավոն՝ առնական արարքների ընդունակ այդ համարձակ կինը, բռնում է նավակի եզրից և նետվում լիճը: Նավակը շուռ է գալիս: Թուրք զինվորները, ինքն էլ հարսի հետ խեղդվում են ջրերի խորքում: Պատմվածքն ավարտվում է կրկին Վանա լճի և շրջակայքի գեղանկար պատկերով, որին, ընդհանրացում կատարելով, հեղինակը հակադրում է մարդուն՝ բնության ներդաշնակության մեջ հանցագործությամբ, շահատակություններով կյանքը տակնուվրա անելու իր սովորույթով: «Դարձյալ աստղերը պլպլում էին ծովի մեջ, դարձյալ լեռները իրենց խոռոչե կույր աչքերով դիտում էին ծովի և երկնքի խաղը, բնության հմայիչ ներդաշնակության մեջ:

Մարդն էր միայն մի հանցավոր շփոթ առաջ բերում այդ բոլորի մեջ. նա՛ էր իր ոճիրով պղծում երկրի երեսը:

Եվ երկիրը կամաչեր երկնքից, եթե խավարը չծածկեր նրա դեմքը...»[2], - գրում է հեղինակը: Սակայն նկատենք, որ Ահարոնյանը թեև չափազանց լայն ընդհանրացում է կատարում՝ մեղադրելով ողջ մարդկությանը, բայցևայնպես ակնհայտ էր, որ այս դեպքում դատապարտվում էին տեղաբնիկ արևմտահայության կյանքում քաոսի նախապատճառ հանդիսացող,հայկական գյուղերում պետական մակարդակով թալան կազմակերպող թուրք մեղսագործները: Ակներև էր նաև այն, որ գեղջկուհի Զավոն յուրայինների բնականոն կյանքը խաթարած թուրքերի դեմ անօրինակ պատվախնդրությամբ է դիմում հերոսական անձնազոհության, անհայտության մեջ կատարում հայդուկային պայքարին արժանավայել սխրանք:

Բանական արարածի արարքներն օբյեկտիվորեն անբանական բնության հետ հակադրամիասնության մեջ դիտարկելով՝ իր և այս, և մյուս համանման գեղարվեստական կառույց ունեցող գործերում Ահարոնյանը մարդուն սթափվելու, տիեզերական կեցության մեջ իր բանականության հումանիստական առաքելությունն արժեքազրկելու ճանապարհից ետ կանգնեցնելու ահազանգն էր հնչեցնում:

«Հազրեն»/1905/ պատմվածքը նվիրված է Անդրանիկ Օզանյանին /ունի «Նվեր Անդրանիկին» ընծայական/: Ինչպես հետագայում գրողն է վկայում, պատմվածքի համար ատաղձ է ծառայել ճանաչված հայդուկապետի պատմածը սասունցի մի կնոջ մասին: Վավերական իրողություններն ու մարդիկ գեղարվեստական հղացքի մեջ վերածվել են Սասունի հերոսամարտի մի դրվագի նկարեն պատումի բաղադրիչներ: Այստեղ թուրքական բանակների հետ տեղի ունեցած անհավասար մարտերում ակներև է դրսևորվել սասունի խիզախ ժողովրդի անկոտրում կամքն ու հպարտ, հերոսական ոգին: Պատմվածքը մասամբ դիմանկարային է: Հազրեի՝ իբրև սասունցի հասարակ գեղջկուհու կերպարը ստեղծվել է օբյեկտիվ ու սուբյեկտիվ կողմերի ինքնատիպ դրսևորումներով: Նրա՝ կանացի ձևերից գրեթե զուրկ արտաքինը, անձնական ձախողված կյանքը /երեք անգամ ամուսնացել էր,երեք անգամ այրիացել և զավակներ չէր ունեցել/ զուգակցված են նրա հերոսական բնավորության հետ: Ոչինչ չէր ընկճել նրա մեջ բռնության դեմ ըմբոստանալու հոգեկան կորովն ու խիզախությունը: Առնական ձևեր ունեցող, կատակասեր այս կինը «Սասունի ռազմիկ, ալեծուփ կյանքին միշտ մասնակցում էր տղամարդի պես»/173/: Այս վերջին հանգամանքի շնորհիվ՝ նա ճանաչման էր արժանացել ոչ միայն իրենց Գոմեր գյուղում, այլև ողջ Սասունում: Երկրամասի վրա թշնամու հաճախակի հարձակումների շրջանում իր համարձակությամբ, գործունյա խառնվածքով աչքի ընկնելով՝ նա տարբերվում էր «Ազատության ճանապարհի» մյուս պատմվածքների /«Էլ մի աղոթիր», «Մեր ճանապարհը», «Կռվի դաշտում», «Ջավոն»/ հերոսուհիներից: Նույնիսկ կարելի է ասել, որ Հազրեն իր տեսակի մեջ հայ նոր գրականության ինքնատիպ հերոսուհիներից է, մասնավորապես, իբրև սասունի ինքնապաշտպանական մարտերի շարքային, իր ուրույն դերը կատարող մասնակից: Իսկ այդ դերը, պայքարի տարերային ընթացքի մեջ նա ինքն էր իրեն հատկացրել: Իր հերոսուհու մտածողությունն ու արարքները բնութագրելու առումով հատկանշական է այն, թե գրողն ինչպես է ներկայացնում սասունցիների կյանքի ու պայքարի մասին նրա պատկերացումները: «Նա,- գրում է Ահարոնյանը,-գիտեր, որ Սասունը միշտ պետք է կռվի, երբ թյուրք ու քյուրդ հրոսակներ ոտք կոխեն նրա սահմանները, որովհետև Ծիրանակատարը, Ընկուզնակն ու Ֆոֆռ քարը հարամիների տեղ չեն. երկրորդ՝ կռվելիս պետք է

շտապով լեռը քաշվել և երրորդ՝ միշտ պետք է հետևից գյուղերը կրակ տալ, որ թշնամին ապաստան ու պաշար չգտնի:

Եվ Հազրեն կռիվների ժամանակ միշտ ինքն էր կրակ տալիս Գոմեր գյուղը, սկսելով իր սեփական խրճթից:Այս էր պատճառը, որ նա փոխանակ ասելու,թե Սասունի վրա չորս անգամ արշավանք է եղել,հպարտությամբ բացականչում էր.

-Էսա ձեռներովս չորս խետ վառեր եմ Գոմերը:Հերոսական ու չարաբաստիկ 95 թվին ռես Գրգոյի հետ էր նստել վեր կացել,ասում էր ինքը, իսկ Սուշում սասունցի ուրիշ կանանց հետ թյուրք ոստիկանների գլխին առաջին քարը նա էր նետել,այդ փաստ էր»:/174/: Հազրեին անհատականացնելիս նրա ներքին հետաքրքրությունների մեջ առաջին պլան է մղվում հատկապես ջերմ սերը ժողովրդի մեջ ճանաչման արժանացած հայդուկ-հերոսների՝ Սերոբի, Մուրադի և Անդրանիկի հանդեպ: Նա երազում էր տեսնել «սարերի ալլանին»՝ Անդրանիկին: Այդ հանդիպումը տեղի է ունենում Գոմերի վրա թուրքական բանակի հերթական հարձակման ժամանակ: Այստեղ մի անգամ ևս /և վերջին անգամ/ դրսևորվում է սասունցի այս կնոջ հերոսական բնավորությունը: Գյուղից բնակչության հեռանալուց հետո Հազրեն կրկին այրում է տները, իսկ վերջին պահին, կյանքը վտանգի ենթարկելով, հրդեհում է քահանայի տունը: Սասունցիների ու թուրքերի միջև մարտն սկսվելիս նա մյուս կանանց հետ չի բարձրանում լեռները, մնում է կռվող տղամարդկանց կողքին: Այստեղ էլ զոհվում է Հազրեն այն պահին, երբ առանց ճանաչելու փորձում է օգնել նրան, ում երկար ժամանակ ցանկանում էր հանդիպել՝ «սարերի ալլան» Անդրանիկին:

Պատմվածքում Անդրանիկը հպանցիկ է հայտնվում, թուրքերի հետ զինված ընդհարումից առաջ ներկայանալով նախ՝ զուսպ հավասարակշռվածությամբ, ապա՝ ծանր վիրավորված Հազրեի նկատմամբ սրտացավ վերաբերմունքով: Մարտերում կոփված հայդուկապետը արտասվում է՝ մահվանից առաջ իր սիրելի հերոսին ճանաչած այդ խիզախ, անխոնջ կնոջ զոհվելու պատճառով: Տվյալ պահին Անդրանիկի զգացմունքների դրսևորումը ցուցադրելով՝ գրողն ընդգծում էր հերոսի հոգու նրբազգացությունն ու խորությունը: Առաջին անգամ ստեղծելով Անդրանիկի գեղարվեստական կերպարը՝ Ահարոնյանը կարևոր էր համարում տեսանելի դարձնել նրա՝հբրև ճանաչված հայդուկների առաջնորդի բնավորության երկու էական կողմերը՝թշնամու դեմ կռվելիս հաստատակամություն դրսևորելու, իսկ յուրայինի հանդեպ կարեկից լինելու ունակությունները: Նրա կերպարով համալրվում, հարստանում է հայդուկների գրական դիմանկարաշարը, հայտաբերվում հայդուկապետին բնորոշ նոր գծեր:

Հազրեի կերպարը թերևս խիստ բացառիկ և նույնիսկ անհասկանալի կարող էր մնալ, եթե հեղինակը մասսայական տեսարանում չներկայացներ գյուղի ողջ բնակչության պահվածքն ու վերաբերմունքը՝ ստրկացնելու, կոտորելու, խաղաղ օջախները կողոպտելու եկած թուրքական բանակ կոչվող

ոճրագործների ոհմակի հանդեպ: Սասունցիների ինքնաբուխ ըմբոստությունը. իրենց ճնշողներին չհնազանդվելու հաստատակամությունն ու ազատասիրությունը պատկերված է ոչ միայն ինքնապաշտպանական մարտի տեսարանով, այլև դեպի լեռնագագաթները բարձրացող կանանց, ծերերի ու երեխաների խմբի նկարեն. մոնումենտալ գեղակերտմամբ:«Եվ ո՛չ մի տրտունջ ծերերի շրթունքներից, որոնք գուցե վերջին անգամն էին թողնում հինավուրց օջախը, որի հետ կապված էին այնքան հիշողություններ. և ոչ մի կաթիլ արցունք կանանց աչքերից, որոնք այնքան տարիների տնտեսությունը ձգում էին թշնամուն և նրա հետ միասին գուցե և իրանց ամուսինների և եղբայրների կյանքը. անգամ փոքրիկները ո՛չ մի ճիչ չէին արձակում, նրանք մրսում էին.կպել էին մայրերի փեշերին և դողդողալով քաշվում էին դեպի լեռների ծյունոտ կատարները եղնիկների ձագերի պես:

Լուռ էին. և այդ սքանչելի լռությունը ծայրագույն վտանգի ժամանակ՝ հպարտ ու խորհրդավոր արհամարհանքն էր, որ լեռների այս քաջերի զավակները շպրտում էին բռնության ճակատին: Թափորն այն աստիճան լուրջ էր, և դեմքերն այնքան երկյուղած, որ կարծես նրանք ուխտի էին գնում ազատության ոգուն, որ թառել էր անմատչելի կատարներին»/175-176/: Ռոմանտիկ ներշնչանքով ու հերոսականի հաստատման գաղափարամիտումով պատկերված տեսարանը և՛ հուզիչ է, և՛ առնականություն ու հպարտություն ներարկող:

Ազգային կյանքի կենսոլորտի մեջ երեխաների ճակատագիրը սովորաբար անխուսափելիորեն նմանվում է մեծահասակների ճակատագրին: Իսկ ինքնապաշտպանական մարտերում ստանձնած, իրենց տարիքին անհարիր դերակատարության պատճառով՝ նրանց մահը դառնում է եզակիորեն սրտառուչ, սրտակեղեք, անամոք վիշտ: Բացի այս, «Վազրիկ» պատմվածքում գրողը հայդուկային պայքարի մեջ հայտնաբերում և հաստատում է նաև այն գաղափարը, ըստ որի՝ հանուն երեխաների մղվող գուպարն ընթանում է ապագայում ազգի գենոտիպի վերընձյուղումն ապահովելու համար: Սրտաճմլիկ, սակայն նաև հպարտության զգացումով ես ընթերցում չարաճճի ու համարձակ պատանի Վազրիկի.այդ «Վանի Գավրոշի» կարճատև կյանքի պատումը: Այն առավել հավաստի լինելու համար ներկայացված է իրադարձության մասնակցի կողմից: Պատմվածքը նվիրված է նշանավոր հայդուկապետ Նիկոլ Դումանին /ունի «Նվեր Դումանին» ընծայական/: Չի բացառվում, որ վերջինս էլ պատմել է Սիարոնյանին Վազրիկի մասին, իսկ պատմվածքում էլ, հեղինակի հղացմամբ, դարձել պատմող՝ապահովելով պատումի վավերականության պատրանքը: Դրան նպաստում է նաև հայդուկապետ Վազգենի մասին ակնարկությունը: Իսկ դեպքը՝որպես արտաքնագրային իրողություն,ամենայն հավանականությամբ տեղի է ունեցել Վանի 1904 թ ինքնապաշտպանական մարտերի ժամանակ: Այս ամենի շնորհիվ՝ նաև գեղարվեստական ակնարկի տպավորություն է թողնում

այս գործը, ուր կարևորվել է, սակայն, թուրքական բանակի ու մի բուռ հայդուկների մղած անհավասար ազատամարտի առաջ բերած ծանր տագնապն ու ութիմը տարեկան պատանու ակամա մասնակցությունը:

Երկի պատկերային համակարգի կենտրոնում, ինչ խոսք, Վազրիկն է: Պատանու կերպարը գեղակերտվել է նրա տարիքին բնորոշ թե ընդհանուր, թե ինքնատիպ կողմերով: Երեխայական չար կատակներ անելու ու չարաճճիությունների հակված լինելով՝ նա վարժվել էր թաղի երեխաների մեջ կռիվներ սարքելու գործում: Ոչ միայն կռվագան էր,նախաձեռնող, այլև իր հակառակորդի հանդեպ մանկամիտ վրիժառությամբ էր լցված: «Նա մշտական պայքարի, անվերջ կռիվների մեջ էր,- գրում է հեղինակը:- Եվ բոլոր այդ կռիվների, բոլոր հալածանքների պատճառը միշտ ինքն էր, Վազրիկը: Ոչ ոք քարերով նրա պես շեշտակի չէր հարվածում կատուներին, շներին, հավերին, փողոցների պատերից քաշ ընկած խնձորենիների պտուղներին...

Եթե որևէ չարաճճի խաղի համար նրան վիրավորում էր մի հասակավոր, Վազրիկը հատուցանում էր իր ուժեղ թշնամու փոքրահասակ եղբորը կամ որդուն»/166/: Բայց ահա Վանում ծավալված կռիվների ժամանակ այս աշխույժ ու ճարպիկ պատանին յուրովի լրջանում է և իր տեղը գտնում մեծահասակների ձեռնարկած վտանգավոր «խաղի» մեջ: Նա դառնում է սուրհանդակ հայդուկապետ Վազգենի և պատմողի միջև: Իրեն տրված հանձնարարությունը կատարում է պատասխանատվության, հիրավի, բարձր զգացումով, պատանուն բնորոշ միամիտ անմիջականությամբ ու պարզամիտ լրջությամբ: Այսպես՝ նրան պատվիրել էին թղթերը հանձնել պատմողին, երբ տանը ոչ ոք չէր լինի: «Փոքրիկ բանբերը ամենայն օր, նույն ժամերին, նույն ձևով ներս էր մտնում, կուրծքը միշտ խնամքով կոճկած, միշտ զգույշ ու լուրջ: Տանեցիներից մենք գաղտնիք չունեինք, բայց Վազրիկը մինչև վերջը համառում էր իր ծայրահեղ զգուշության մեջ և նրանց ներկայությամբ չէր համածայնում կուրծքը բանալ: Նրա այդ սիրուն քմահաճույքը կատարած լինելու համար իմ խնդրով տանտիկինը իր փոքրիկի հետ ուևէ պատրվակով դուրս էր գնում, հենց որ Վազրիկը հայտնվում էր: Ծերունին շատ լավ չէր տեսնում, այդ լավ գիտեր Վազրիկը և նրանից չէր քաշվում, իրեն բոլորովին ապահով զգալով՝ նա շտապով մոտենում էր ինձ, չոքում էր առաջիս և կամացուկ կրկնում իր սովորական նախադասությունը, ցույց տալով կուրծքը.

- Քակի՛ր, էսա տեղ բան կա:

Թղթերը հանում էի, և նա կրկին անհայտանում էր, կրծքի վրա փոխադարձապես տանելով իմ նամակները՝ Վազգենին ուղղած»/169-170/:

Մի օր էլ հանձնարարությունը կատարելիս թշնամու ռմբահարվածի պայթյունից զոհվում է Վազրիկը՝«այդ արիասիրտ, դյուցազական մանուկը, որ ոչնչից չէր վախենում»: Քաջարի պատանու մահը անագորույն թշնամու դեմ մի

նոր մոլեգնությամբ կռվելու է մղում նրան ճանաչող հայդուկներին: «Բոլոր վազրիկների անբիծ արյան սիրուն՝ կռիվ էր պետք: Եվ կռիվն սկսվեց»/171/: Այս տողերով է պատմվածքն ավարտում հեղինակը:

Այսպիսով՝«Զավոն», «Հազրեն», «Վազրիկ» պատմվածքները ևս գտնվում են «Ազատության ճանապարհին» ժողովածուի գաղափարագեղարվեստական գերխնդիրների ուղեծրում: Արտաբնագրային գաղափարական պաթոսը պատմվածքներում փոխակերպվել է հմտորեն իրականացված գեղարվեստական հորինվածքների: Դրանք իրենց ամբողջության մեջ ակնառու են դարձնում այն իրողությունը, որ հայդուկային պայքարը միայն դրսից՝ եվրոպական երկրներում իրենց կենտրոններն ունեցող ազգային կուսակցությունների կողմից ներմուծված գաղափարների ու հրահրման հետևանք չէր: Այն Օսմանյան Թուրքիայի տիրապետության խիստ ծանր ու բարդ պայմաններում գոյատևող արևմտահայության կենսական շահերն արտահայտող շարժում էր, որին այս կամ այն կերպ մասնակցում էին նույնիսկ կանայք ու երեխաները:

Այստեղ արժի նկատել նաև հետևյալը, որ խորհրդային տարիներին հայկական դպրոցներում մեր աշակերտները հնարավորություն չունեցան Հովհ. Թումանյանի «Գիքորի» հետ կարդալու նաև Ա.Սհարոնյանի «Վազրիկը»: Մինչդեռ վերջինս ավելի կընդլայներ նրանց պատերազմների շրջանակը արևմտահայության ազատագրական պայքարի, ինչպես նաև հայդուկային կռիվներին յուրովի մասնակցած, իրենց հասակակից, պատանի հերոս կոչվելու արժանի Վազրիկի մասին: Նրա կերպարը հետաքրքիր, ոգևորիչ և ուսանելի կարող է լինել շատերի համար:

Բացի այս, Ա.Սհարոնյանի «Ազատության ճանապարհին» ժողովածուն խորհրդային տարիներին, հանիրավի, ըստ արժանվույն չի գնահատվել նաև մեր գրականագիտության կողմից: Մինչդեռ նրանում ընդգրկված են գեղարվեստորեն լիարժեք ստեղծագործություններ, որոնց շնորհիվ գիրքն արժանի է հիշատակվելու արևմտահայ ու արևելահայ մի շարք գրողների /ինչպես, օրինակ՝ Գ.Զոհրապի, Ռ.Զարդարյանի, Ստ.Զորյանի, Ա.Բակունցի և այլն/ հանրահայտ պատմվածքների ու նովելների ժողովածուների կողքին: Այդ են վկայում նաև վերլուծված պատմվածքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Хализев В.Е.,Теория литературы, М., Высшая школа, 2004, с. 76:
2.Սհարոնյան Ա., Երկերի ժողովածու, Բոստըն, հ. 5, 1948, էջ 81: Այս հատորից մյուս մեջբերումները կատարելիս տեքստում նշել ենք միայն էջը: